

ՍԵՐԳԵՅ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ԳՈՐԻՍԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

Արդյո՞ք գորիսյան քարագործ վարպետների նախնիները դարեր ի վեր գործ են ունեցել քարը քանդակելու, մշակելու արվեստի հետ: Արդյո՞ք հին ժամանակներից ինչ-որ բան մեզ է հասել, որպեսզի կարողանանք լիարժեք խոսք ասել դրա վերաբերյալ: Պարզվում է՝ այո՛: Ամբողջական շենք-շինություններ հին դարերից մեզ չեն հասել, չեն պահպանվել, շատ բան չհուշող, տեղ-տեղ փլված պատերի կամ պարզապես քարե կույտերի, պատաշարերի մնացորդներ կարելի է տեսնել, եթե չհաշվենք Ակներ գյուղի կիկլոպյան կառույցների նշմարելի հետքերը: Բայց և այնպես, բարեբախտաբար, ճեղքելով ժամանակների սլացքի հեռավորությունը ու կրոնական արգելանք-կաղապարները՝ մեզ են հասել մեր նախնիների կերտած, կռապաշտական-հեթանոսական ժամանակներից մնացած կուռքերի արձաններ, վիշապասյուներ, խոյակներ և այլն: Դրանցում իսկույն աչքի է զարնվում ստեղծագործ անհատի ձեռագիրը:

Հին քարագործ վարպետների աշխատանքների մասին մեզ հուշում են առ այսօր պահպանված քարե կուռքերի մնացորդները, որոնք հատկապես շատ են Հարժիս գյուղում: Ահա դրանցից մի քանի նմուշներ:

---

* Հոդվածը ներկայացվել է 22.11.2019 թ., գրախոսվել՝ 15.12.2019 թ., տպագրության ընդունվել՝ 20.12.2019 թ. :



Հինգղիմանի քարե կուռք: Բարձրությունը՝ 50 սմ , գլխամասի տրամագիծը՝ 52 սմ: Գտնվել է Հարժիսում, պահպանվում է Գորիսի թանգարանում:

Կուռքի գլուխ: Քիչ հանդիպող կարմիր չեչոտ քար: Բարձրությունը՝ 33 սմ, լայնությունը՝ 23 սմ: Գորիս, Շռռան թաղամաս: Գտնվում է Վոլոդյա Հակոբջանյանի բակում: Պեղվել է տեղում 1985 թ.:

Վնասված դեմքով գլուխ: Հարժիս: Տեղական սպիտակ քար:
Բարձրությունը՝ 50 սմ, լայնությունը՝ 25 սմ

Պաշտամունքային սյան գլխամաս, խորհրդավոր ժպիտով դիմաքանդակով: Սյան երկարությունն է՝ 2 մ 60 սմ, կողերի լայնությունը՝ 36 սմ x 46 սմ: Հարժիս

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ: Հազարավոր տարիներ առաջ Գորիսի և նրա գյուղերի տարածքներում իրականացվել են նաև քաղաքացիական շինարարական աշխատանքներ: Դրանք եղել են քարավանատներ, ձիթհանքեր, ջրաղացներ, ամրոցներ ու բերդեր, կամուրջներ, բնակելի տներ, ջրանցքներ, աղբյուրներ և այլն:

Նմանատիպ կառույցների մեծ մասը լիովին կամ մասամբ կիսավեր կամ անօգտագործելի վիճակում են, սակայն դրանց չափերը իրականացման մասշտաբները, ծավալները որոշակի տպավորություն են թողնում՝ լինելով երբեմն ինժեներական բարդ խնդիրների լուծումների արգասիք: Աննշան չափով են պահպանվել հատկապես հին բերդերն ու ամրոցները: Թշնամին երկրամաս ներխուժելուց հետո դրանք քանդել-հողին է հավասարեցրել: Հզոր բերդ է եղել նաև Գորիս գյուղի գլխավերևում, որն այսօր տեղացիները կոչում են *Բերդ-քերծ*: Այդ կառույցից մնացել է ժայռի ծայրին կպած բերդապատի մի փոքրիկ հատված, որը երկրաշարժից ժայռի հետ պոկվել է հիմնական պատից ու թեքվել առաջ: Հիմնական պատը չկա, բայց ժայռի պտկին թառած պատի հատվածը մնացել է:

Թեքված ժայռի գլխին պահպանված բերդի պատի հատված:
Գեղանկար՝ Հ. Թաղևոսյանի, 1992 թ.

Շրջանի տարածքում մի քանի տեղ բերդի կամ ամրոցի հետքեր նշմարվում են, բայց ոչ ավելին:

Հարյուրամյակների պատմություն ունեցող ամենաերևելի կառույցը շրջանի տարածքում թերևս եղել է Վարարակն-Ցաքուտ ջրանցքը: Ինչպես վկայում է Ս. Օրբելյանը, Զագեձորի Վարարակն (Ակներ) կոչված ջուրը 932 թ. գնել է Տաթևի Հակոբ եպիսկոպոսը (12000 դրամով ու մի թանկագին քարով) ու տարել-հասցրել է մինչև Տաթևի ձորը՝ Սատանայի կամրջի մոտ գտնվող Ցաքուտ կոչվող տեղամասն ու այն դարձրել վարդաստան[1]: Ջրանցքի գործարկումից հետո այստեղ կառուցվել է գմբեթահարկ նկարազարդ խորան, որի ավերակները մնում են Գորիս-Տաթև ճանապարհի վրա՝ մինչև Սատանայի կամուրջ հասնելը:

Ակներ-Ցաքուտ ջրանցքն ունեցել է 30 կմ երկարություն, ջրի անկումն ելման կետից կազմել է ավելի քան 1000 մ: Այն իրենից ներկայացրել է հիդրոտեխնիկական բարդ ու մեծածավալ կառույց: Ինչպես իր հիշատակի գրում-խոստովանում է Հակոբ եպիսկոպոսը, կառույցը իրականացվել է «...բազում ծախսերով ու մեծամեծ չարչարանքներով»: Ջրանցքը կառուցվել է ինժեներական հմտությամբ, առանց արհեստական լրացուցիչ շինությունների, շրջանցել է ձորակներ, հեղեղատներ, անցել ժայռոտ ու անտառոտ տեղանքներով: Այստեղ աշխատել են տասնյակ վարպետների, հարյուրավոր բանվորներ: Ջրանցքի հարատև հետագա գործարկումը պահանջել է մշտական հսկողություն, ամենամյա մաքրման կամ նորոգման աշխատանքներ:

Ցաքուտում ճանապարհի շինարարության ժամանակ բացվել են կավե զույգ խողովակներ՝ քյունգեր: Դրանց շարունակությունը կազմող զույգ խողովակները երևում են նաև ձորից այն կողմ՝ դիմացի լանջին, Տաթև տանող ճանապարհի ձախ մասում, Սատանայի կամրջից քիչ վերևը՝ ճամփեզրի լանջի

[1] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները **Ա. Աբրահամյանի**, Երևան, 1986, էջ 226-227:

վրա: Ջրանցքի ջուրը հատել է Սատանայի կամրջի կիրճը և ինքնահոս հասել հակադիր ափի պապակ հողերին:

Ակներ-Ցաքուտ ջրանցքը գործել է տասնամյակներ կամ գուցե հարյուրամյակներ, բայց հետո խափանվել է: Պրոֆ. Գր. Գրիգորյանի կարծիքով՝ այդ կարող էր տեղի ունենալ 13-րդ դարում, երբ Սյունիքին տիրած մոնղոլների մոտ սկսվեցին լուրջ արքունական խժդժություններ[1]: 13-րդ դարի վերջին Տաթևի վանքի առաջնորդ Հայրապետ եպիսկոպոսի ու տեր Հովհաննեսի ջանքերով կատարվում են ջրանցքի վերանորոգման ու մաքրման լուրջ աշխատանքներ: Այդ առթիվ նրանք Ձագեձորի հովտի հյուսիսում, Վարարակն գետի ակունքից ոչ հեռու, մի խոշոր ժայռաբեկորի վրա, որ տեղացիները կոչում են *Ճղած (ճեղքված) քար,* թողել են նորոգման արձանագրություն. «ՉԽԳ (1294 թ.) Ես, տեր Հովհաննեսս, Աստծո կամքով և աղոթքով իմ հոգևոր հայր տեր Հայրապետի, Վարարակնի ջուրը տարա Վարդուտ, որ աստվածապատիվ և հոգևոր տեր Հակոբը գնել էր և տարել մեծամեծ աշխատանքներով, երկար ժամանակ խափանված էր, կրկին նորոգեցինք ի հիշատակ մեզ և մեր նախնիների, ովքեր որ հանդիպեն, թող հիշեն սուրբ երրորդությամբ ի սեր Քրիստոսի»[2]:

Վարարակն-Ցաքուտ ջրատարի հետագիծը Ձագեձորի լեռան լանջին այսօր էլ նշմարվում է Ակներ և Վերիշեն գյուղերից: Տեղացիները այն կոչում են *Տերտերի* կամ *Քահանայի առու:* XX դարի կեսերին Ակների ջրի մի մասը, որպես խմելու զուլալ ջուր, տարվել է Գորիս քաղաք:

---

[1] Տե՛ս **Գրիգորյան Գր., Հախվերդյան Ս.,** Սյունիքի պատմություն, Երևան, 2001, էջ 119:

[2] Արձանագրությունն առաջին անգամ աշխարհաբար թարգմանվել ու հրատարակվել է տողերիս հեղինակի կողմից 2005 թ. (տե՛ս **Հախվերդյան Ս**., Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005, էջ 88-89): Իսկ արձանագրությունը կրող քարը ճեղքվել է ջրանցքի համար:



Զագեձոր-Ցաքուտ ջրանցքի նորոգման արձանագրությունը (1294 թ.): Ակներ

Գորիսի շրջանի Հալիձոր գյուղի Շրջիկ կոչված վայրում՝ Որոտանի ձախ ափի այգիների մեջ կանգնեցված խաչքարի թիկունքի արձանագրությունը վկայում է, որ ոմն Գրիգորիկ մեծ աշխատանքներով 1265 թ. անց է կացրել առու: Տարսայիճ Օրբելյան իշխանը հաստատում է Գրիգորիկի ջանքերով կառուցված ջրանցք-առուի վկայագիրը. «Ես Տարսայիճս գիր տվի հայրէնեց ազգէ ազգ: Ց: ամ էր որ ավեր էր...»[1]: Հաբանդ-Գորիսի իշխանը հավանություն է տալիս 300 տարի ավեր մնացած ջրանցքի գործարկմամբ, որով Որոտանի կենարար ջուրը հասցվում էր այգիներին:

Ք(Յ)ԱՀՐԵ(Ի)ԶՆԵՐ, ՔԱՐԱՎԱՆԱՏՆԵՐ, ԱՄԱՐԱԹՆԵՐ: Սյունիքում, մասնավորապես Գորիսում և նրա գյուղերում, քաղաքացիական կարևոր կառույցներ են համարվել քահրիզները: Քահրիզը, ինչպես արդեն նշել ենք, ստորգետնյա ջրահավաք համակարգ է, որը հիմնականում արվել է խմելու ջրի ակունք-աղբյուր ստեղծելու համար[2]: Այդ եղել է աշխատատար գործ.

---

[1] Դիվան հայ վիմագրության: Պրակ II: Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ: Կազմեց՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1960, էջ 52:

[2] Տե՛ս **Պապուխյան Ն.**, Սյունիքի ժողովրդական ճարտարապետություն, Երևան, 1972, էջ 16, տե՛ս նաև **Աղայան Է.,** Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 1545, 1570:

կառուցող-շինարարներից պահանջվել են որոշակի հիդրոինժեներատեխնիկական հմտություններ, կարողություններ, երբեմն՝ նաև ինժեներականբարդ լուծումներ: Կառուցողները ստիպված են եղել պատրաստել պատաշար թունելներ: Այդ իմաստով թերևս ամենից բարդ ու երևելի կառույցը եղել է մելիքանիստ Խանածախ գյուղի քահրիզի կառուցումը Մելիք-Հայկազ Բ-ի օրոք՝ 16-րդ դ. 2-րդ կեսին: Ջուրը բերվել է հեռվից՝ որոշակի թեքություն ունեցող գյուղի ողջ երկարությամբ, այն, հատուկ ջրահավաք թունելով իր մեջ առնելով այս ու այնտեղից դուրս եկող ջրերը, հասցվել է մինչև գյուղի հարավային ծայրը՝ մինչ մելիքի ապարանքի սահմանը. այն նաև հոգալու էր մելիքական բաղնիքի կարիքները: Բաղնիքի շինության պատերը նշմարվում են: Քահրիզ-աղբյուրի ջուրը մինչև օրս բավարարում է գյուղի բնակիչների կարիքները: Քահրիզ ունի նաև Տեղ գյուղը, բայց այն գյուղի տարածքում չէ, այլ բավական հեռվում՝ Խանածախ տանող ճանապարհի ձախ մասում: Սակայն դա չի խանգարում, որ գյուղացիները իրենց տոնախմբություն-հյուրասիրություններն անց կացնեն քահրիզ-աղբյուրում: Բնակավայրից հեռու կառուցված քահրիզը եղել է տոնախմբությունների վայր:

Գորիսի շրջանում հանդիպում են հին սրանոցներ, ջրաղացներ, հնձաններ, քարավանատներ, փոքրիկ ջրատար, բայց հմտությամբ կառուցված առուներ: Գորիսում սրանոց-ձիթհանները սովորաբար առանձին կանգնած կառույցներ են՝ թաղակապ ծածկերով, որոշները՝ նույնիսկ գմբեթով: Գմբեթով է նաև Տաթևի վանքի մոտ՝ պարիսպներից դուրս գտնվող սրանոցը, որը մի ամբողջական արտադրական կառույց է՝ ձեթի արտադրության առանձին գործողությունների՝ բովման, աղացման, մամլման համար նախատեսված արտադրամասերով: Սրանոցներ են կառուցվել նույնիսկ քրատակ-ժայռանձավներում, որպիսին կա, օրինակ, հին Խնձորեսկում:

Գորիսի շրջանի տարածքում՝ Հարժիս գյուղից մոտ մեկ կիլոմետր հյուսիս, պահպանվել են Օրբելյան իշխանների կառուցած պանդոկ-հյուրատան՝ քարավանատան ավերակ-

ները: Քարավանատունը բաղկացած է եղել մի քանի շինություններից:

Ուշագրավ է սկալակտիազարդ շքամուտքը: Այստեղ կնքվել են բազմաթիվ առևտրական գործարքներ: Քարավանատան արևմտյան մուտքի ճակատին մնում է խիստ վնասված արձանագրություն, ուր ընթերցվում է 1343 թվականը և Բեշքեն Օրբելյան անունը: Պահպանվել է կիսավեր վիճակում: Պատկանում է եռանավ դահլիճ քարավանատների տիպին: Ուղղանկյուն դահլիճը (ներսի չափերը՝ 10.2x18.2 մ) երկու շարք (4-ական յուրաքանչյուրում) մույթերով բաժանված է 3 մասերի: Մույթերը միմյանց ու պատերին կապված են եղել այժմ կիսավեր թաղածածկ կրող կամարներով, որոնք թաղերի հետ միասին առնված էին երկլանջ կտուրի տակ: Հետագայում մուտքի առաջ կցվել է փոքր չափերի (4.05 x 4.9 մ) մի նախասրահ (այժմ՝ ավերակ):

Հարժիսի քարավանատունը կարևորվում է նրանով, որ տեղադրությամբ պարզում է Նախիջևանից և Արարատյան դաշտից Սյունիքի Ծղուկ և Հաբանդ գավառների վրայով դեպի Արցախ ու Պարտավ տանող առևտրական հին ճանապարհի ուղղությունը: Քարավանատան շրջակայքում հայտնաբերվել են 1.5-2 մ բարձրությամբ ցից քարեր, որոնք, հետազոտողների կարծիքով, դրվել են ճանապարհի վտանգավոր մասերում՝ ձյան կամ մառախուղի պայմաններում ճանապարհի ուղղությունը չկորցնելու համար: Նման ճանապարհացույց քարեր գտնվել են նաև Գորիսի Խանածախ գյուղի մոտ: Ցից քարերի գլխամասում երևում են անցքեր, որոնք արվել են փոկերի միջոցով ծանր քարերը քարշ տալու համար:

Հարժիսի քարավանատունը

Հարժիսի ձոր: Սատանի կամուրջը

Հարժիսի ձորում պահպանվել է այդ ժամանակաշրջանում Որոտան գետի վրա կառուցված միաթռիչք քարե կամուրջը: Կամրջի ներքին հատվածը կլոր է, որի պատճառով տեղաբնակներն այն կոչում են «Սատանի կամուրջ»: Նրա վրա կա օտար լեզվով արձանագրություն, որը չի հրապարակված:

Ժողովրդական ճարտարապետության ներկայանալի նմուշներ են գորիսեցու հին բնակավայրերը կամ, ինչպես

տեղացիներն են կոչում, *Շենները*: Դրանք արծվաբների պես կպած են եղել լեռնալանջերին, ունեցել են և՛ խմելու, և՛ ոռոգման ջուր, պաշտպանված են եղել և՛ թշնամուց, և՛ քամիներից, և՛ նույնիսկ երկրաշարժերից: Երկրաշարժի ժամանակ *Շենները* քարերի գահավեժ հեղեղից չեն տուժել, քանի որ քարերը թռել-անցել են տների վրայով:

Քաղաքացիական վաղ կառույցներից մեզ են հասել նաև մելիքական ապարանքները Խանածախ, Տեղ և Խնձորեսկ գյուղերում: Ապարանքների կառուցումը իրականացնողները, անշուշտ, եղել են բարձրակարգ շինարար-վարպետներ, որոնք ցուցաբերել են ճարտարագիտական ու ճարտարապետական հմտություններ և կարողություններ: Մելիքական ապարանքը եղել է համալիր կառույց՝ պարսպի մեջ առնելով նաև օրինազանցների համար նախատեսված բանտը, բաղնիքը, հացատունը, զորանոցը և այլ կարգի շինություններ: Հաստ ու բարձր պարիսպների առկայությունը վկայում է, որ ապարանքը եղել է նաև պաշտպանված հանկարծակի հարձակումից:

Մելիք-Հայկազ Բ-ի՝ Խանածախում կառուցած ապարանքը (16-րդ դ.)

17-րդ դարի 2-րդ կեսին Մելիք-Հայկազ Բ-ի Խանածախում կառուցած մելիքական ապարանքը մեզ է հասել համեմատաբար բարվոք վիճակում: Տեղ գյուղում Մելիք-Բարխու-

դարի ժառանգների ամարաթը կառուցվել է 1783 թ.: Այն իրենից ներկայացնում է տարբեր սենյակներից բաղկացած ամբողջական բնակելի համալիր: Հատկապես աչքի է ընկնում ընդարձակ սեղանատունը՝ քարերով կրաշաղախ շարված գմբեթավոր առաստաղով, որի ծայրը պսակվում է շրջանաձև լուսամուտով:

Հին Խնձորեսկում գտնվող կիսավեր մելիքական ապարանքը պատկանել է Մելիք-Փարամազին: Մելիքական ապարանք-ամարաթները, պատկանելով ուշ միջնադարին, իրենց մեջ պարունակում են ավելի վաղ ժամանակների պալատական ճարտարապետության շատ տարրեր:

Մելիք Բարխուդարի ապարանքի սեղանատան գմբեթավոր առաստաղը ներսից: Տեղ գյուղ, 1783 թ.

ԳՈՐԻՍԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՍԵՐԳԵՅ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Հոդվածում փորձ է արվում պատասխանել այն հարցին, թե ինչը կարող էր խթան հանդիսանալ գորիսեցի շինարար վարպետների համար, ձեռնամուխ լինելու ժողովրդական ճարտարապետության սքանչելի նմուշների ստեղծմանը: Հեղինակը կարծիք է հայտնում, որ նման խթան կարող էին լինել գորիսեցի կանայք, որոնք ստեղծում էին բարձրարժեք գորգեր:

Բանալի բառեր - Գորիս, ժողովրդական ճարտարապետություն, ակունք գորգագործություն, քաղաքացիական կառույցներ:

ИЗ ИСТОРИИ АРХИТЕКТУРЫ ГОРИСА

РЕЗЮМЕ

СЕРГЕЙ АХВЕРДЯН

Статья пытается ответить на вопрос о том, что могло быть стимулом горисских мастеров строителей для создания великолепных народных архитектурных произведений.

По мнению автора, этим стимулом могли быть горисские женщины, которые создавали ценные ковры.

Ключевые слова: Горис, народное зочество, источник, ковроделие, гражданские стройки.

FROM THE HISTORY OF GORIS ARCHITECTURE

SUMMARY

SERGEY HAXVERDYAN

In the an attempt is made to answer the guestion of what serve as an incentive for the masters-builders of Goris to begin to create superb models of folk architecture.

The author believes that such an incentive could be women from Goris, who made expensive carpets.

Key words: Goris, folk architecture, origin, carpetmaking, civil structures.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աղայան Է.,** Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, 1545 էջ:
2. **Գրիգորյան Գր.**, **Հախվերդյան Ս.**, Սյունիքի պատմություն, Երևան, 2001, 315 էջ:
3. Դիվան հայ վիմագրության: Պրակ II: Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ: Կազմեց՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1960, 240 էջ:
4. **Հախվերդյան Ս.**, Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005, 446 էջ:
5. **Պապուխյան Ն.**, Սյունիքի ժողովրդական ճարտարապետություն, Երևան, 1972, 168 էջ:
6. **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները **Ա. Աբրահամյանի**, Երևան, 1986, 614 էջ: